



ԿՈՐՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.
ԿՈՐՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻ
ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

ԴԱՍ 8



ԿՈՐՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՐՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

«Չեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության տեսակետների հետ:



ՂԱՍ 8

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՉԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՉԱՎԱՔՄԱՆ
ՉԻՄՆԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ,
ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ-ՉԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ




ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս դասը կազմված է հետևյալ 4 բաղադրիչներից.
մոտիվացնող ներածական տեսանյութ,
դասի տեսական նյութ,
բառարան և
ինքնաստուգիչ հարցեր:
Բոլոր բաղադրիչների յուրացման համար
Ձեզ հարկավոր է 4 ժամ:

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով
ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն
այս ձեռնարկում:

ՄՈՏԻՎԱԶՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ



Տեսանյութն ուշադրությամբ
ուսումնասիրելու համար անհրաժեշտ է
մոտ 5 րոպե:



Ուշադրությամբ
կարդացեք դասի
տեսական մասը՝
օգտվելով բառարանից,
և այն յուրացնելուց հետո
միայն պատասխանեք
ինքնաստուգիչ
հարցերին:
Այս աշխատանքների
համար անհրաժեշտ է
մոտ 205 րոպե:

8

անկացած բնույթի հանցագործության բացահայտման համար անհրաժեշտ են ապացույցներ, որոնք պետք է հաստատեն հանցագործության կատարման փաստը, անձի մեղավորությունը և գործի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները: Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության համար շատ կարևոր է քննության պլանի ճիշտ կազմումը: Պետք է հստակ որոշվի նպատակը և դրան հասնելու միջոցները, որը ենթադրում է քննչական և օպերատիվ-հետախուզական գործողությունների ճիշտ իրականացումը: Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեմ պայքարի իրականացման համար կարևոր է նաև իրավական փոխադարձ օգնության կազմակերպումն այլ երկրների հետ, մասնավորապես՝ տեղեկությունների փոխանակում և ֆինանսական հոսքերին հետևելու համար համապատասխան միջոցների ձեռնարկում:

Քանի որ քննարկվող հանցագործությունների բացահայտման գործընթացը բավական բարդ

ԿՈՐՐՈՒՊՑԻՈՆ ՀԱՆԶԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՐԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՄՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.
ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՋԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԴԱՍ 1

ԴԱՍ 2

ԴԱՍ 3

ԴԱՍ 4

ԴԱՍ 5

ԴԱՍ 6

ԴԱՍ 7

ԴԱՍ 8

ԴԱՍ 9


ԴԱՍ 10

է, ուստի կարևոր է այդ հանցագործություններով քննչական խումբ ստեղծելը, որի կազմում ցանկալի կլինեն ընդգրկվելին փորձառու քննիչներ:

Ինչ վերաբերում է քննարկվող հանցագործությունների դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմին, ապա այս առնչությամբ թերևս անհրաժեշտություն կա քննարկման առարկա դարձնել առանձին քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ օրենսդրական գործիքակազմի ձևավորման հարցը:

Կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի համար պետք է օգտագործվեն օրենքով սահմանված բոլոր համապատասխան միջոցները, ներառյալ ներքոնշյալները՝

- ցանկացած բնույթի ընդհանուր մատչելի տեղեկատվություն,
- տեղեկատվական հաղորդակցման բարձր տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները,
- հետախուսային հաղորդակցության վերահսկումն ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր վայրերում,
- վերահսկելի մատակարարումներ,
- կաշառք ստանալու և տալու նմանակումներ,
- ներքին և արտաքին դիտումներ,
- վճարված հարկերի և ստացված եկամուտների մասին հարկային մարմիններից տեղեկությունների ստացումը,
- աուդիտի և այլ ստուգումների տվյալների օգտագործում,



Փորձեք սպառնիչ կերպով ներկայացնել կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի միջոցները:

- պաշտոնատար անձանց կողմից ներկայացված հայտարարագրերի ստուգում,
- միջազգային համագործակցության օգտագործում:

ՀՀ գործող քրեադատավարական կարգավորումների համատեքստում նշված հանցագործությունների դեմ պայքարի շրջանակում առավել արդյունավետ միջոցը կարող է լինել բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացումը, որի օրենսդրական կարգավորման հետ կապված առանձին խնդիրներին անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը: Այսպես, Վճռաբեկ դատարանը նախ քննարկման առարկա է դարձրել այն հարցը, թե արդյոք բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները վերաբերում են մարդու անձնական կյանքին և, ըստ այդմ, կարող են պաշտպանված լինել մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ուժով: Մասնավորապես, «Արարատբանկ» ԲԲԸ-ի գործով Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. *«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համարադրում մեկնաբանելով «անձնական կյանք» եզրույթը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ այն լայն հասկացություն է և ենթակա չէ սպառիչ սահմանման: Եվրոպական դատարանը գտել է, որ անձնական կյանքի ոլորտն ընդգրկում է մարդու առողջությունը, ֆիզիկական և հոգեկան ամբողջականությունը: Անձնական կյանքի իրավունքը ներառում է նաև անհատական զարգացումը, այլոց և ընդհանրապես արտաքին աշխարհի հետ հարաբերություններ հաստատելը և զարգացնելը (տե՛ս NADA v. SWITZERLAND գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2012թ.-ի սեպտեմբերի 12-ի վճիռը, գանգապ թիվ 10593/08, կետ 151):*

(...) «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սպասարկման կամ այլ գործառնությունների կապակցությամբ բանկի և անձի միջև հաստատված հարաբերությունները՝ որպես արտաքին աշխարհի հետ անձի հարաբերությունների փարսպեղանակ, հանդիսանում են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրո-

պական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված՝ մարդու անձնական կյանքի մաս» (1):

Նույն գործով, ելնելով ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասի և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումներից՝ Վճռաբեկ դատարանը հստակ փաստել է, որ անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունը կարող է տրամադրվել քրեական վարույթն իրականացնող մարմնին, եթե՝

1 անձը ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված կարգով ներգրավվել է որպես կասկածյալ կամ մեղադրյալ,

2 առկա է բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման նպատակով խուզարկություն կամ առգրավում կատարելու թույլտվություն տալու վերաբերյալ դատարանի որոշումը:

Ընդ որում, նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ֆինանսական տվյալների մատչելիության վերահսկման օպերատիվ-հետախուզական գործողության օրենսդրական կարգավորման առանձնահատկությունները, որոնք, ի տարբերություն քրեադատավարական կարգավորումների, թույլ են տալիս բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալ նաև կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ չունեցող անձանց նկատմամբ, հիշյալ հակասությունը լուծել է հօգուտ քրեադատավարական օրենքի:

Ավելի ուշ, *Կարեն Հարությունյանի և այլոց գործով* որոշման մեջ Վճռաբեկ դատարանը որո-

Ուշադրություն դարձրեք և մտապահեք այն իրավիճակները, որոնց պարագայում անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունը կարող է տրամադրվել քրեական վարույթն իրականացնող մարմնին:

Ծանոթացեք Ծանոթացեք ֆինանսական տվյալների մատչելիության վերահսկման շուրջ տարբեր ժամանակահատվածներում պրակտիկայում կիրառվող լուծումների զարգացումներին և հարցի վերջնական հստակեցմանը:

շակիորեն վերանայել է իր՝ վերը հիշատակված իրավական դիրքորոշումը՝ փաստացի ընդլայնելով այն սուբյեկտների շրջանակը, որոնց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ կարող են ստացվել: Մասնավորապես, նշված գործով Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասում տեղ գտած «քրեական գործով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ» հասկացության վերլուծությունը վկայում է, որ խոսքը ոչ թե սուկ կասկածյալի կամ մեղադրյալի անվամբ, այլև նրան մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ին անմիջականորեն առնչվող իրավաբանական անձին վերաբերող բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների մասին է, եթե առկա է հիմնավոր ենթադրություն, որ այդ իրավաբանական անձի գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվել, վերահսկվել կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվել է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից:

Ուշադրություն դարձրեք այս հատվածի բացատրությանը:

(...) [Վ]արույթն իրականացնող մարմինը պետք է քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցներով (փաստական տվյալներով) հիմնավորի, որ համապատասխան քննչական գործողության արդյունքում ձեռք են բերվելու կասկածյալին կամ մեղադրյալին մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ին անմիջականորեն առնչվող և այն իրավաբանական անձին վերաբերող բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, որի գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվել, վերահսկվել կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվել է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից: Եման մեկնաբանության համար հիմք է ծառայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասի և 282-րդ հոդվածի համա-

կարգային վերլուծությունը: Այսինքն՝ վարույթն իրականացնող մարմինը բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ սրանալու համար առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն սրանալու մասին միջնորդությամբ պետք է ներկայացնի անհրաժեշտ և բավարար փաստեր, որոնք դատարանին հիմք կդնեն որոշումներ կատարել, որ տվյալները, որոնք ակնկալվում է սրանալ համապատասխան քննչական գործողության կատարման արդյունքում, անմիջականորեն առնչվում են կասկածյալին կամ մեղադրյալին մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ին և վերաբերում են նրա կողմից ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվող, վերահսկվող կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվող իրավաբանական անձին» (2):

Այս վերջին մոտեցումն է ամրագրված նաև ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքում առգրավման օրենսդրական կարգավորումների համատեքստում, համաձայն որի՝ բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող փաստաթղթերը կամ առարկաները կարող են առգրավվել միայն այն դեպքում, երբ դրանք վերաբերում են

Ծանոթացեք օրենսդրական կարևոր փոփոխությունների:

- 1 այն ֆիզիկական անձին, ում վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր,
- 2 մեղադրյալին,
- 3 այն ֆիզիկական անձին, ում վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ նրա և սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձի միջև առկա է անմիջական կապ, և բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող փաստաթղթերը կամ առարկաներն ուղղակիորեն առնչվում են վերջինիս վերագրվող փաստերին,

ԿՈՌՈՊՑԻՈՆ ՀԱՆՑԱՊՈՐՏՈՒՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՐԵԱԿԱՆ ՊՐԵՍԿԱՆ ՊՐԵՎԵՆՄԵՆՏԻ ԸՆԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.
ՔՆՆՉԱԿԱՆ ՊՐԵՎԵՆՄԵՆՏԻ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՐՁԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

4 այն իրավաբանական անձին, որի կապակցությամբ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվում, վերահսկվում կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվում է սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձի կողմից, և բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող փաստաթղթերը կամ առարկաներն ուղղակիորեն առնչվում են վերջինիս վերագրվող փաստերին (273-րդ հոդվածի 4-րդ մաս):

ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած կարգավորումների առնչությամբ ուշագրավ է երկու կարևոր հանգամանք: Նախ՝ նույն սուբյեկտային կազմն է նախատեսված նաև ֆինանսական գործարքների վերահսկման գաղտնի քննչական գործողության իրականացման համար: Դրանով վերացվել է արդեն իսկ քննարկված հակասական օրենսդրական կարգավորման խնդիրը: Եվ երկրորդ կարևոր հանգամանքն այն է, որ ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգիրքն ընդլայնել է այն սուբյեկտների շրջանակը, որոնց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ կարող են ստացվել՝ նախատեսելով այն ֆիզիկական անձին, ում վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ նրա և փաստացի կասկածյալի կամ մեղադրյալի միջև առկա է անմիջական կապ, և բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող փաստաթղթերը կամ առարկաներն ուղղակիորեն առնչվում են վերջինիս վերագրվող փաստերին:

Պետք է փաստել, որ գործող օրենսդրական կարգավորումներն այնքանով, որքանով չեն նախատեսում կասկածյալից կամ մեղադրյալի գատ այլ անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման հնարավորություն, ինչպես իրավաչափորեն նշում է Վճռաբեկ դատարանը, «չի համապատասխանում քննարկվող դատավարական (քննչական) գործողությունների առջև դրված խնդիրներին, էականորեն սահմանափակում է դրանց՝ քրեական գործով վարույթի համար ունեցած դերն ու նշանակությունը: Արդյունքում, մասնավոր շահը չարդարացված գերակայում է հանցագործությունների բացահայտման (հանցավորության դեմ պայքարի) հանրային շահի նկատմամբ» (3):

Այս առնչությամբ խնդրի հնարավոր լուծումը հանրային և մասնավոր շահի ողջամիտ հավասարակշռություն ապահովող օրենսդրական կարգավորում առաջարկելն է: Մի կողմից՝ անձանց չափազանց լայն և անորոշ շրջանակի նախատեսումը կարող է հանգեցնել վարույթի հետ որևէ առնչություն չունեցող անձի մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի անհամաչափ սահմանափակման, սակայն մյուս կողմից՝ չափազանց նեղ շրջանակի նախատեսումը կարող է լուրջ խոչընդոտ լինել կոռուպցիոն հանցագործությունների արդյունավետ քննության և բացահայտման խնդրի իրացման համար:

Քննարկվող խնդրի առնչությամբ կարիք կա անդրադառնալու ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2020թ.-ի հունվարի 22-ին ընդունված, սակայն ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2020թ.-ի հունիսի 18-ի թիվ ՍԴՈ-1546 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին, որն առավել ընդհանուր ձևակերպմամբ նախատեսում էր ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված կոնկրետ հանցագործություններով նաև կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման հնարավորություն: Վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականության առումով Սահմանադրական դատարանը գտել է, որ. « (...) 1) հանցագործությունների շրջանակը, որն օրենսդրի կողմից նախատեսվել է որպես մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակման պայման, այնպիսի ընտրության արդյունք է, որը չի

Ըստ Ձեզ՝ որքանով է բարձրաձայնված խնդիրը կարգավորվել:

հիմնավորվում սույն գործի նյութերից բխող որևէ օբյեկտիվ կամ ողջամիտ չափանիշով, իսկ քրեական գործ հարուցելու համար Օրենսգրքով բավականին ցածր ապացուցողական շեմ սահմանված լինելու (27-րդ և 175-րդ հոդվածներ) կամ ենթադրյալ հանցագործության նախնական ոչ ճիշտ որակման պայմաններում մինչդարական վարույթի նկատմամբ դարական վերահսկողության շրջանակներում դարարանը չի կարող արդյունավետորեն երաշխավորել անձի հիմնական իրավունքի սահմանափակման իրավաչափությունը, քանի որ իրավասու չէ ստուգել քրեական գործի հարուցման օրինականությունը և հիմնավորվածությունը.

2) քրեական վարույթի շրջանակներում անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքով պաշտպանվող՝ բանկային գաղտնիք կազմող և այլ գաղտնի տեղեկություններ քննիչի միջնորդության հիման վրա դարարանի պարճառաբանված որոշմամբ սրանալը չի վերաբերում միայն քրեական դարավարությունում ներգրավված անձանց, ինչպես նաև օրենքով որևէ կերպ չի որոշակիացվում նրանց առնչակցությունը քննվող հանցագործությանը, ներառյալ՝ նրանց օբյեկտիվ կապը մեղադրանքի հիմքում դրված փաստերի կամ կոնկրետ քրեական գործով ապացուցման ենթակա հանգամանքների հետ (Օրենսգրքի 107-րդ հոդված).

3) մինչդարական վարույթում անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման իրավաչափությունն ստուգելու ընթացակարգային առանձնահատկությունների ուժով չփրապելելով քրեական գործի բոլոր նյութերին, չկարողանալով ճշտել որոշակի փաստեր կամ հանգամանքներ և ղեկավարվելով օրենքով նախանշված՝ խիստ ընդհանրական ու գնահատողական չափանիշներով դարարանը չի կարող նաև օբյեկտիվորեն հիմնավորված հետևություն անել, թե արդյո՞ք քննիչի միջնորդության մեջ նշված այս կամ այն հանգամանքը «գործով էական նշանակություն ունեցող է», թե ոչ կամ եզրակացնել, թե արդյո՞ք այն կարող էր պարզվել «ողջամտորեն հնարավոր այլ եղանակով», թե ոչ (...) (4)»:

Հաջորդ խնդիրը, որը գործնականում կարող է ծագել գործող խիստ կարգավորումների ուժով, այն է, որ այն դեպքերում, երբ օբյեկտիվորեն անհնար լինի անձին պահանջվող դատավարական կարգավիճակ տալն է (օրինակ՝ մահվան

դեպքում), ինչը լուրջ խնդիրներ կարող է առաջացնել գործի լուծման համար նշանակություն ունեցող՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու և օրինակ՝ հանցավոր կամ կազմակերպված խմբի կողմից կատարված հանցավոր արարքի մեխանիզմում մյուս հանցակիցներին մերկացնելու համար:

ՀՀ գործող օրենսդրական կարգավորումների համատեքստում հասանելի գործիքակազմի շրջանակում արդյունավետ միջոց կարող է ծառայել հեռախոսային խոսակցությունները լսելու քննչական գործողությունը (հեռախոսային հաղորդակցության վերահսկողությունը՝ որպես օպերատիվ-հետախուզական գործողություն), ներքին և արտաքին դիտման օպերատիվ-հետախուզական գործողությունը, կաշառք տալու (ստանալու) նմանակումը: Իհարկե օպերատիվ-հետախուզական այս վերջին միջոցառման առումով չափազանց կարևոր է կաշառքի պրովոկացիայից խուսափելը, որի համար նախատեսված է նույնիսկ քրեական պատասխանատվություն ՀՀ գործող քրեական օրենսգրքի 350-րդ հոդվածով: Այս առումով ընդհանուր առմամբ կիրառելի են քննության գաղտնի միջոցների կիրառման, այդ թվում՝ գործակալների ներդրման կիրառման պարագայում թակարդումից խուսափելու՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) մշակած չափանիշները: Այսպես, ընդհանուր առմամբ Եվրոպական դատարանի գնահատմամբ՝ գաղտնի գործակալների օգտագործումը ծանր հանցագործությունների դեմ պայքարում քննության իրավաչափ մեթոդ է, այդուհանդերձ այն պահանջում է համարժեք երաշխիքներ հնարավոր կամայականությունների դեմ, քանի որ հանրային շահը չի կարող արդարացնել ապացույցների օգտագործումը, որոնք ձեռք են բերվել ոստիկանական սադրանքի արդյունքում (5): Կոնվենցիան չի բացառում անանուն աղբյուրներից տեղեկությունների օգտագործումը մինչդեռ տական վարույթում և այն դեպքում, երբ դա արադարացված է հանցանքի բնույթով: Այնուամենայնիվ նման աղբյուրների հետագա օգտագործումը դատական քննության փուլում անձին դատապարտելու համար ընդունելի է, միայն եթե առկա են անհրաժեշտ և բավարար երաշխիքներ ընդդեմ չարաշահման, մասնավորապես, խնդրո առարկա միջոցառումները թույլատրելու, իրականացնելու և վերահսկելու հստակ և կանխատեսելի մեխանիզմներ (6):

Քննարկեք գաղտնի միջոցառումների կիրառման իրավաչափությունը:

Այն դեպքերում, երբ հիմնական ապացույցը բխում է գաղտնի միջոցառումից, օրինակ, թմրանյութերի վերահսկելի գնումից կամ կաշառք տալու նմանակումից, իրավասու մարմինները պետք է կարողանան ցույց տալ, որ առկա են բավարար հիմքեր գաղտնի միջոցառումն իրականացնելու համար: Մասնավորապես, իրավասու մարմինը պետք է տիրապետի կոնկրետ և օբյեկտիվ ապացույցների, որ ձեռնարկված են եղել այն հանցանքի կատարման ուղղված սկզբնական քայլերը, որն անձին մեղսագրվում է (7):

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ ցանկացած տեղեկություն, որի վրա հիմնվում են իշխանությունները, պետք է ստուգելի լինի (8): Բացի այդ, Եվրոպական դատարանի գնահատմամբ՝ ցանկացած գաղտնի միջոցառում պետք է բավարարի քննությունը պասիվ եղանակով իրականացնելու պահանջին: Հետևաբար, առանցքային նշանակություն ունի այն փաստի հաստատումը, թե արդյոք հանցանքն արդեն իսկ ընթացքի մեջ էր, երբ ոստիկանությունը միջամտել է (9):

Եվրոպական դատարանն ընդգծում է ներպետական դատարանների դերակատարումն այն գործերով, որոնցով մեղադրյալը պնդում է, որ հանցանքը կատարել է սադրանքի արդյունքում: Սադրանքի մասին ցանկացած հիմնավոր պնդում պարտավորեցնում է դատարանին քննել այն արդար դատաքննության իրավունքին համահունչ եղանակով: Սադրանքի խնդրի վերաբերյալ կիրառման ենթակա ընթացակարգը պետք է լինի մրցակցային, մանրակրկիտ, համապարփակ, ամբողջական և վերջնական՝ սադրանքի բացակայության վերաբերյալ ապացուցման բեռը դնելով մեղադրանքի կողմի վրա (10):

Դատական վերահսկողության շրջանակը պետք է ներառի գաղտնի միջոցառումը ձեռնարկելու հիմքերը, ոստիկանության՝ հանցանքի կատարմանը ներգրավվածության աստիճանը կամ ճնշումը, որին ենթարկվել է անձը (11):

Ընդ որում, այն գործերով, որոնցով Եվրոպական դատարանը չի կարողացել բավարար աստիճանի որոշակիությամբ պարզել, թե արդյոք անձը ենթարկվել է ոստիկանության կողմից սադրանքի, որոշիչ է եղել դատավարական կողմը (12): Եվրոպական դատարանը նշել է, որ գործակալների ներդրմամբ գործերի համար ընդհանրական է այն, որ անձը ձեռնպահ է մնում սադրանքի մասին բողոք բարձրացնելուց, քանի որ համապատասխան ապացույցը հասանելի չի եղել պաշտպանության կողմին, որպես կանոն, կոնկրետ ապացույցին հանրային շահի տեսանկյունից անձեռնմխելիություն շնորհելու որոշման հիման վրա: Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով արդար դատաքննության իրավունքի համատեքստում ճանաչելով մեղադրանքի կողմի տիրապետության տակ գտնվող թե՛ արդարացնող և թե՛ մեղադրական ապացույցներին հասանելիություն ունենալու պաշտպանության կողմի իրավունքը, այնուամենայնիվ, ընդունել է, որ մրցակցային դատավարության իրավունքը կարող է սահմանափակվել գերակա հանրային շահի առկայության դեպքում, ինչպիսին է՝ ազգային անվտանգությունը, քննության կոնկրետ ոստիկանական մեթոդները գաղտնի պահելու անհրաժեշտությունը կամ մեկ այլ անձի հիմնարար իրավունքների պաշտպանությունը: Այս դեպքում արդար դատաքննությունը պահանջում է դատական քննության համապատասխան երաշխիքների առկայություն(13):

Սակայն անգամ գերակա հանրային շահի առկայության դեպքում Եվրոպական դատարանն առանցքային է համարել թակարդման մասին բողոքի քննության ընթացակարգի քննարկումը՝ համոզվելու համար, որ պաշտպանության կողմի իրավունքները, մասնավորապես, մրցակցության և կողմերի հավասարության, համարժեք պաշտպանված են (14):

Կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի համատեքստում կարևոր է օրենսդրական նորամուծություն է պետք է համարել ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքով օպերատիվ-հետախուզական առանձին միջոցառումների ներմուծումը քրեական դատավարություն գաղտնի քննչական գործողությունների անվան տակ, որոնցից շատերի կիրառումը կարող է առնչվել վերը քննարկված խնդիրների հետ: Այսպես, խոսքը, մասնավորապես, վերաբերում է

Ծանոթացեք ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքով գաղտնի քննչական գործողությունների անվան տակ քրեական դատավարություններ մուծված օպերատիվ-հետախուզական առանձին միջոցառումներին, որոնց մի մասի կիրառությունը կարող է հեշտացնել կոռուպցիոն գործերի ուսումնասիրությունն ու բացահայտումը:

ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածով նախատեսված այնպիսի գործողություններին, ինչպիսիք են՝ ներքին դիտումը, արտաքին դիտումը նամակագրության և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկումը, թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկումը, ֆինանսական գործարքների վերահսկումը, կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը: Քրեադատավարական նոր կարգավորումների էական առանձնահատկությունն անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների խիստ սահմանափակում նախատեսող այս գործողությունների կատարման հիմքերն ու պայմանները, ինչպես նաև իրավաչափության երաշխիքները, որոնք աչքի են ընկնում հանրային և մասնավոր շահի ողջամիտ հավասարակշռություն ապահովելու տեսանկյունից:

Ծանոթացեք օրենսդրական կարևոր փոփոխությունների:

Այսպես, ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի 242-րդ հոդվածի համաձայն՝ գաղտնի քննչական գործողություն կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ դրա արդյունքով կարող է ձեռք բերվել տվյալ վարույթի համար նշանակություն ունեցող ապացույց, և միաժամանակ այլ եղանակով այդ ապացույցի ձեռքբերումը ողջամտորեն անհնար է: Ինչ վերաբերում է պայմաններին, ապա պետք է առկա լինեն

1 քննիչի հանձնարարությունը և դատարանի որոշումը.

2 ծանր կամ առանձնապես ծանր, ինչպես նաև կաշառք ստանալու կամ կաշառք տալու ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթ:

Գաղտնի քննչական գործողությունների իրավաչափության երաշխիքների շարքում պետք է առանձնացնել այն անձանց շրջանակի հստակեցումը, ում նկատմամբ կարող են կատարվել նշված գործողությունները: Մասնավորապես, ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ հոդվածի համաձայն՝ այդպիսիք (բացառությամբ կաշառք ստանալու և կաշառք տալու նմանակման, ֆինանսական գործարքների վերահսկման) կարող են կատարվել

1 այն ֆիզիկական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր,

2 մեղադրյալի նկատմամբ,

3 այն ֆիզիկական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ մեղադրյալը պարբերաբար անմիջականորեն հաղորդակցվել է կամ ողջամտորեն կարող է հաղորդակցվել նրա հետ,

4 այն իրավաբանական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվում, վերահսկվում կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվում է 1-ին կամ 2-րդ կետով նշված անձի կողմից:

Ֆինանսական գործարքների վերահսկման քննչական գործողությունը կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ դրա արդյունքով ստացվելիք տեղեկությունները ողջամտորեն կարող են վերաբերել

1 այն ֆիզիկական անձին, որի վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր,

2 մեղադրյալին,

3 այն ֆիզիկական անձին, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ նրա և սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձի միջև առկա է անմիջական կապ, և ստացվելիք տեղեկություններն ուղղակիորեն առնչվում են վերջինիս վերագրվող փաստերին.

4 այն իրավաբանական անձին, որի կապակցությամբ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կարող է կառավարվել, վերահսկվել կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվել սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձի կողմից, և ստացվելիք տեղեկություններն ուղղակիորեն առնչվում են վերջինիս վերագրվող փաստերին:

Իսկ կաշառք տալու կամ ստանալու նմանակում գաղտնի քննչական գործողությունը կարող է կատարվել բացառապես այն անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր:

Վերը հիշատակված գաղտնի քննչական գործողությունների (բացառությամբ կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակման) կատարման ընդհանուր ժամկետը նույն վարույթով չի կարող գերազանցել տասներկու ամիսը: Ընդ որում, ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի էական նորամուծություններից է պարբերական դատական վերահսկողության նախատեսումը, քանի որ յուրաքանչյուր անգամ դատարանի թույլտվությունը կարող է տրվել երեք ամիսը չգերազանցող ժամկետով:

Ընդգծման կարիք ունի նաև այն կարգավորումը, համաձայն որի՝ կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում գաղտնի քննչական գործողությունը նույն անձի նկատմամբ մինչև նույն անձի տված ցուցմունքի հիման վրա կարող է կատարվել միայն մեկ անգամ:

Կոռուպցիոն հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարի միջոցների շարքում առանձնահատուկ կարևոր տեղ է զբաղեցնում գույքի բռնագրավումը: Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 31-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր Մասնակից պետությունն առավելագույն չափով, որը հնարավոր է իր ներքին իրավական համակարգի շրջանակներում, պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել բռնագրավման հնարավորությունն ապահովելու համար՝*

ա) հանցագործություններից արացված եկամուրդների, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան, կամ այն գույքի, որի արժեքը համապատասխանում է այդպիսի եկամուրդների արժեքին.

բ) գույքի, սարքավորման և այլ միջոցների, որոնք օգտագործվել են կամ նախարեսվել են իրավահասկարումներ կարարելիս օգտագործելու համար, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապարասիան:

(...)»:

Ընդ որում, այս համատեքստում միջազգային փորձը վկայում է, որ տարբեր երկրներում կիրառվում են գույքի բռնագրավման քրեաիրավական, քաղաքացիաիրավական (այդ թվում՝ նաև դատապարտման վրա չհիմնված) և վարչաիրավական եղանակներ (15):

Անդրադառնալով այս առնչությամբ ներպետական կարգավորումներին՝ պետք է փաստել, որ քրեադատավարական հիմնական մեխանիզմը գույքի վրա կալանք դնելն է (ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 32-րդ գլուխ), մասնավորապես գույքի հնարավոր բռնագրավումը և բռնագանձումն ապահովելու համար:

Ընդ որում, առավել արդյունավետ գործիքակազմ է բռնագանձման նպատակով գույքի վրա արգելանք դնելը: Այսպես, ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1.1-ին մասի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմինն անհապաղ կալանք է դնում ՀՀ գործող քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված բռնագանձման ենթակա գույքի վրա: Իսկ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի 1-ին մասին համաձայն՝ հանցագործության կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ցանկացած գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, այնպիսի հանցագործության կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները և միջոցները, որի կատարման արդյունքում ստացվել է գույք, ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, նույն օրենսգրքի 215.1-ին, 235.1-ին և 267.1-ին հոդվածներով նախատեսված մաքսանենգության ճանապարհով ՀՀ սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկաները, իսկ դրանց բացակայության դեպքում

դրանց համարժեք գույքը, բացառությամբ բարեխիղճ երրորդ անձի գույքի, տուժողին և քաղաքացիական հայցվորին հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման համար անհրաժեշտ գույքի, ենթակա է բռնագանձման՝ հոգուտ պետության:

Վերոհիշյալ դիտարկման համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ ի տարբերություն գույքի վրա կալանք դնելու այլ հիմքերի, այդ թվում՝ գույքի հնարավոր բռնագրավումն ապահովելու համար, գույքի բռնագանձման նպատակով դրա վրա կալանք դնելիս վարույթն իրականացնող մարմինը խնդիր ունի բացառապես հիմնավորելու, որ խոսքը ՀՀ գործող քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածում նշված գույքի մասին է: Այսպես, *Մամվել Մայրապետյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) [Ա]նձի սեփականության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումը բացառող կարևոր դատարարական երաշխիք է օրենսդրական այն պահանջը, որ վարույթն իրականացնող մարմնի որոշումը՝ անձի գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ, պետք է լինի օրինական, հիմնավորված և պարճառաբանված: Իսկ դա ենթադրում է, որ գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը պետք է կայացվի քրեադատարարական օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ, քրեադատարարական հարկադրանքի այս միջոցի կիրառման անհրաժեշտությունը, այլ կերպ՝ դրա կիրառման հիմքերի և նպատակների առկայությունը հիմնավորող՝ քրեական գործի նյութերից բխող փաստական փվյալների հիման վրա: Գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ վարույթն իրականացնող մարմինը, հիմնվելով գործում առկա նյութերի վրա, պարտավոր է հիմնավորել դրա իրավական հիմքերի և նպատակներից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը՝ չսահմանափակվելով միայն գույքի վրա կալանք դնելը կարգավորող օրենսդրական ձևակերպումների շարադրանքով: Միայն վերոնշյալ չափանիշների պահպանման դեպքում է հնարավոր ապահովել հասարակության ընդհանուր շահի և անհատի սեփականության (կամ այլ գույքային) իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռությունը:

Հարկ է նշել, որ կանխարգելիչ բնույթ կրող քրեադատավարական հարկադրանքի այս միջոցի կիրառման համար անհրաժեշտ է քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, բռնագանձումը կամ դատական ծախսերն ապահովելու նպատակներից առնվազն մեկի առկայությունը:

Միևնույն ժամանակ, գույքի վրա կալանք դնելու համար (բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված դեպքի) անհրաժեշտ է նաև, որպեսզի վարույթն իրականացնող մարմնի կողմից հիմնավորվի, որ գործով հավաքված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ անձը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել առկա գույքը: Գույքը թաքցնելու, փչացնելու կամ սպառելու հավանական վրանգը վարույթն իրականացնող մարմինը պետք է հիմնավորի գործով ձեռք բերված փաստական տվյալ(ներ)ով, հակառակ պարագայում անհարկի կասահմանափակվի իր գույքն անարգել տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու՝ անձի սահմանադրական իրավունքը:

Ուշադրություն դարձրեք կանխարգելիչ բնույթ կրող քրեադատավարական հարկադրանքի միջոցներին:

15.1. Վճարելի դատարանը հարկ է համարում նշել, որ անգամ գույքի վրա կալանք դնելու իրավական հիմքերի և նպատակների առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինն օժտված է կանխարգելիչ բնույթ կրող քրեադատավարական հարկադրանքի այս միջոցը կիրառելու հայեցողական լիազորությամբ: Եման հերևությունը բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվող՝ «կարող է կիրառվել» ձևակերպումից: Այնուամենայնիվ, վերոնշյալ կանոնից օրենսդիրը սահմանել է բացառություն՝ նախատեսելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի

1-ին մասով նախատեսված բռնագանձման ենթակա գույքի վրա կալանք դնելը վարույթն իրականացնող մարմնի անհապաղ կատարման ենթակա պարտականությունն է, որը նպատակ է հետապնդում ապահովել գույքի հնարավոր բռնագանձումը» (16):

Մինչ հաջորդ պարբերությունը կարդալը վերհիշեք դաս 4-ի առանցքային կետերը:

Ինչ վերաբերում է, այսպես կոչված, դատապարտման վրա չհիմնված գույքի բռնագրավմանը, ապա դրան համարժեք ներպետական կարգավորումն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման քաղաքացիաիրավական մեխանիզմն է, որը ներդրվեց 2020թ.-ի ապրիլի 16-ին ընդունված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին ՀՀ օրենքով: Չմանրամասնելով նշված օրենքի կարգավորումները՝ հարկ է նշել, որ դրա 3-րդ հոդվածի 12-րդ կետի համաձայն՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման նպատակով իրավասու մարմնի նախաձեռնած ընթացակարգ է, որն սկսվում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշման կայացմամբ, ներառում է գույքի քաղաքացիական բռնագանձման հայցի հարուցումը և ավարտվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով կամ նույն օրենքով նախատեսված այլ հիմքերով: Ընդ որում, նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ իրավասու մարմինը կարող է սկսել ուսումնասիրություն հետևյալ հիմքերի առկայության դեպքում.

ԿՈՈՐԴԻՆԱՏՈՐ ԸՆԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՐԵՆԱԿԱՆ ՓՈՐՇՈՎ ՍՊՍՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՎԱՔՍԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՄԻՋՑՆԵՐԸ.
ՔՆՆԳԱԿԱՆ ՓՈՐՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՐՁԱԿԱՆ ՄԻՋՑՈՒՄՆԵՐ

- 1 առկա է օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատական ակտ, որով հաստատվում է նույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարումը, և տվյալ քրեական գործի նյութերով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ դատապարտված անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որը չի բռնագանձվել դատավճռով,
- 2 հարուցված քրեական գործով անձը որպես մեղադրյալ է ներգրավվել սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման համար, և առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք,
- 3 առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն նույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման առնչությամբ քրեական հետապնդումը կամ քրեական գործի հարուցումն անհնար է հետևյալ հիմքերից մեկով.
 - I ընդունվել է համաներման մասին օրենք,
 - II անցել են վաղեմության ժամկետները,
 - III անձը մահացել է,
 - IV անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկվելու՝ օրենքով նախատեսված տարիքին,
- 4) առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն նույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման առնչությամբ հարուցված քրեական գործը կասեցվել է ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով,
- 5) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալներով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:

Վերոշարադրյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ քննարկվող օրենքի իմաստով ուսումնասիրություն սկսելու հիմքերից միայն մեկն է կապված մեղադրական դատավճռի առկայության հետ: Մյուս հիմքերի առկայության պարագայում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը կարող է նախաձեռնվել և ավարտին հասցվել՝ անկախ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությունից:



- 1** ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «Արարատրանկ» ԲԲԸ-ի գործով 2013թ.-ի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0015/07/13 որոշման 15-րդ և 16-րդ կետերը, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=88087>
(վերջին անգամ դիտարկել է 26.01.2022թ.)
- 2, 3** ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Կարեն Հարությունյանի և այլոց գործով 2015թ.-ի օգոստոսի 15-ի թիվ ԵԿԴ/0223/07/14 որոշման 26-րդ և 28-րդ կետերը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=93566>
(վերջին անգամ դիտարկել է 26.01.2022թ.)
- 4** ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2020թ.-ի հունիսի 18-ի թիվ ՍԴՈ-1546 որոշման 4.3-րդ կետը, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=143674>
(վերջին անգամ դիտարկել է 26.01.2022թ.)
- 5** Եվրոպական դատարանի՝ Teixeira de Castro v. Portugal գործով վճիռը, 9 հունիսի 1998, 34-36-րդ կետեր, https://www.hr-dp.org/files/2013/09/10/CASE_OF_TEIXEIRA_DE_CASTRO_v._PORTUGAL_.pdf
(վերջին անգամ դիտարկել է 26.01.2022թ.)
- 6** Եվրոպական դատարանի՝ Khudobin v. Russia գործով վճիռը, գանգատ թիվ 59696/00, 135-րդ կետ, 26 հոկտեմբերի 2006, https://www.hr-dp.org/files/2013/09/06/CASE_OF_KHUDOBIN_v._RUSSIA_.pdf
(վերջին անգամ դիտարկել է 26.01.2022թ.):

Ramanauskas v. Lithuania [GC] գործով վճիռը, գանգատ թիվ 74420/01, 5 փետրվարի 2008, 53-րդ կետը,
<http://surl.li/bfnfc>

(վերջին անգամ դիտարկել է 26.01.2022թ.)

7 Եվրոպական դատարանի՝ Sequeira v. Portugal գործով որոշում, գանգատ թիվ 73557/01, ECHR 2003-VI,
<http://surl.li/bfnfe>

(վերջին անգամ դիտարկել է 26.01.2022թ.);

Eurofinacom v. France գործով որոշում, գանգատ թիվ 58753/00, ECHR 2004-VII,
<http://surl.li/bfnff>

(վերջին անգամ դիտարկել է 26.01.2022թ.);

Shannon v. the United Kingdom գործով որոշում, գանգատ թիվ 67537/01, ECHR 2004-IV,
<http://surl.li/bfnfh>

(վերջին անգամ դիտարկել է 26.01.2022թ.);

Ramanauskas v. Lithuania [GC] գործով վերը հիշատակված վճիռը, 63-րդ և 64-րդ կետեր,
<http://surl.li/bfnfc>

(վերջին անգամ դիտարկել է 26.01.2022թ.);

Malininas v. Lithuania գործով վճիռ, գանգատ թիվ 10071/04, 36-րդ կետ, 1 հուլիսի 2008,
<https://en.efhr.eu/2010/02/11/case-malininas-v-lithuania-application-no-1007104-2008/>

8 Եվրոպական դատարանի՝ Vanyan v. Russia գործով վճիռը, գանգատ թիվ 53203/99, 49-րդ կետ, 15 դեկտեմբերի 2005,
<https://www.srji.org/resources/search/27/>

(վերջին անգամ դիտարկել է 26.01.2022թ.);

Khudobin v. Russia գործով վերը հիշատակված վճիռը, 134-րդ կետ,
https://www.hr-dp.org/files/2013/09/06/CASE_OF_KHUDOBIN_v._RUSSIA_.pdf
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

9 Եվրոպական դատարանի՝ Sequeira v. Portugal գործով զանգառ թիվ 73557/01,
ECHR 2003-VI,

<http://surl.li/bfnfe>

(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.);

Eurofinacom v. France գործով որոշում, զանգառ թիվ 58753/00, ECHR 2004-VII,

<http://surl.li/bfnfm>

(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

10, 11 Եվրոպական դատարանի՝ Ramanauskas v. Lithuania [GC] գործով վճիռը,
զանգառ թիվ 74420/01, 5 փետրվարի 2008, 70-րդ կետը,

<http://surl.li/bfnfc>

(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

12 Եվրոպական դատարանի՝ Edwards and Lewis v. the United Kingdom [GC]

գործով վճիռ, զանգառներ թիվ 39647/98 և 40461/98, 46-րդ կետ,

<http://webcache.googleusercontent.com/search?q=cache:MIw49Qd2ez0J:hudoc.echr.coe.int/app/conversion/pdf/%3Flibrary%3DECHR%26id%3D001-61246%26filename%3D001-61246.pdf+%&cd=1&hl=ru&ct=clnk&gl=am>

<http://webcache.googleusercontent.com/search?q=cache:MIw49Qd2ez0J:hudoc.echr.coe.int/app/conversion/pdf/%3Flibrary%3DECHR%26id%3D001-61246%26filename%3D001-61246.pdf+%&cd=1&hl=ru&ct=clnk&gl=am>

<http://webcache.googleusercontent.com/search?q=cache:MIw49Qd2ez0J:hudoc.echr.coe.int/app/conversion/pdf/%3Flibrary%3DECHR%26id%3D001-61246%26filename%3D001-61246.pdf+%&cd=1&hl=ru&ct=clnk&gl=am>

(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.);

Constantin and Stoian v. Romania գործով վճիռ, զանգառներ թիվ 23782/06 և

46629/06, 56-57-րդ կետեր, 29 սեպտեմբերի 2009,

<https://opil.ouplaw.com/view/10.1093/law:ihrl/3676echr09.case.1/law-ihrl-3676echr09>

(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

13 Եվրոպական դատարանի՝ Doorson v. the Netherlands գործով վճիռ, 26 մարտ
1996, 70-րդ կետ,

https://www.hr-dp.org/files/2013/09/08/CASE_OF_DOORSON_v._THE_NETHERLANDS_.pdf

https://www.hr-dp.org/files/2013/09/08/CASE_OF_DOORSON_v._THE_NETHERLANDS_.pdf

(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.);

Van Mechelen and others v. the Netherlands գործով վճիռ, 23 ապրիլ 1997, 58-րդ կետ,

<https://www.legislationline.org/documents/id/17310>

(վերջին անգամ դիտարկել է 26.01.2022թ.);

Jasper v. the United Kingdom [GC] գործով վճիռ, գանգատ թիվ 27052/95, 51-53-րդ կետեր,

<https://www.legislationline.org/documents/id/17314>

(վերջին անգամ դիտարկել է 26.01.2022թ.);

S.N. v. Sweden գործով վճիռ, գանգատ թիվ 34209/96, 47-րդ կետ,

<https://www.nkmr.org/en/european-court-of-human-rights/1607-s-n-v-sweden-admissibility-decision>

(վերջին անգամ դիտարկել է 26.01.2022թ.);

Botmeh and Alami v. the United Kingdom գործով վճիռ, գանգատ թիվ 15187/03, 37-րդ կետ, 7 հունիսի 2007,

<https://swarb.co.uk/botmeh-and-alami-v-the-united-kingdom-echr-7-jun-2007/>

(վերջին անգամ դիտարկել է 26.01.2022թ.);

Leas v. Estonia գործով վճիռ, գանգատ թիվ 59577/08, 76-րդ կետից սկսած, 6 մարտ 2012,

<https://vm.ee/sites/default/files/content-editors/CASE%20OF%20LEAS%20v.%20ESTONIA.pdf>

(վերջին անգամ դիտարկել է 26.01.2022թ.)

14 Եվրոպական դատարանի՝ Edwards and Lewis v. the United Kingdom [GC] գործով վճիռը, գանգատներ թիվ 39647/98 և 40461/98, 46-48-րդ կետեր, <http://surl.li/bfnfx>

(վերջին անգամ դիտարկել է 26.01.2022թ.);

Jasper v. the United Kingdom [GC] գործով վերը հիշատակված վճիռը, 50-րդ և 58-րդ կետեր,

<https://www.legislationline.org/documents/id/17314>

(վերջին անգամ դիտարկել է 26.01.2022թ.)

15 Best Practices in Investigating and Prosecuting Corruption, Using Financial Flow Tracking Techniques and Financial Intelligence, A Handbook APEC Anticorruption and Transparency Working Group (ACTWG), September 2015,
https://www.apec.org/docs/default-source/Publications/2015/10/Best-Practices-in-Investigating-and-Prosecuting-Corruption/APEC-Handbook-Final-September-2015_ed2.pdf

(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

16 Վճռաբեկ դատարանի՝ Սամվել Մայրապետյանի գործով 2019թ.-ի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԴԻ/0587/11/18 որոշման 15-րդ և 15.1-ին կետերը,
<https://court.am/storage/uploads/files/service-page/HjY1MESnHG5VYoe6iJhneq395Lcq8u0BaAgE47Wi.pdf>

(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

ԲԱՌԱՐԱՆ



Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 10 րոպե:

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔ — Գույք է, այդ թվում՝ մեկ միավոր գույք, մի քանի միավոր գույք կամ մեկ միավոր գույքի բաժին, որի ձեռքբերումը «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով չի հիմնավորվում օրինական եկամուտներով՝ անկախ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ կամ հետո ձեռք բերված լինելու հանգամանքից, ինչպես նաև այդպիսի գույքի օգտագործումից ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները):

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ՎԱՐՈՒՅԹ — Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման նպատակով իրավասու մարմնի նախաձեռնած ընթացակարգ է, որն սկսվում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշման կայացմամբ, ներառում է գույքի քաղաքացիական բռնագանձման հայցի հարուցումը և ավարտվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ հիմքերով:

ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ — Բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկություններն են, հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման,

գյուտի, արդյունաբերական դիզայնի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ:

ԶԳԱԼԻՈՐԵՆ ՊԱՄԻՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ — Իշխանության ներկայացուցիչների կողմից որոշակի գործողությունների իրականացումն է օբյեկտիվ կասկածներ ունենալու դեպքում առ այն, որ անձը ներգրավված էր հանցավոր գործունեության մեջ կամ նախատրամադրված էր հանցագործություն կատարել, ինչպես նաև առանց անձին հանցանք կատարմանը հրահրելու գործողությունները:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍԱԴՐԱՆՔ (ՊՐՈՎՈԿԱՑԻԱ), ԹԱԿԱՐԴՈՒՄ — Իշխանության ներկայացուցիչների (նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց) կողմից իրականացված գործողություններ են, որոնք դուրս են գալիս զգալիորեն պասիվ ձևով քննության շրջանակներից՝ պայմանավորելով անձի կողմից հանցագործություն կատարելու նախաձեռնության ձևավորումը, որպեսզի հնարավոր դարձնեն հանցագործության հաստատումը, այն է՝ ապահովեն ապացույցներ և հարուցեն քրեական հետապնդում: